



Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

13

ԳԼՈՒԽ ՃԲ ՎԱՍՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՈՒՍՏԵՐԱՅ ԵՒ ԴՍՏԵՐԱՅ

Եւ նախ զայս ասասցուք, զի երկու դուստր, որ այր առեալ իցեն, մի որդոյ բաժին առցեն: Եւ այս վկայեալ է ի կանոնաց եւ յՕրինաց նշանակեալ: Խօսեցաւ Տէր Մովսիսի եւ ասէ. խօսեաց ընդ որդիսն Իսրայէլի եւ ասասցեսցնոսաւ. որ որ ուխտիցէ ուխտս՝ տալ զգին անձին իւրոյ Տեառն, եղիցին զինք արուին, ի քսանամենից մինչեւ ցվաթսնամեանս, եւ եղիցին զինք նորա յիսուն երկդրամենաս արծաթոյ ըստ սրբութեան սկեղն, եւ իգին լիցին զինք երեսուն երկդրամեան: Ապա թէ ի հինգամենից մինչեւ ցքսանամեանս՝ լինիցին զինք արուին քսան երկդրամեան, եւ իգին՝ տասն երկդրամեան: Նաեւ ի կազմածն տեսանի, զի կրկին ատուրց կարօտանայ էգն ի ծնունդն, ըստ որում թերին առաւ կող. եւ անունն իսկ նշանակէ, զի «կին» ըստ կիսոյն անուանի մարմնոյն: Եւ թէպէտ ի մի պատուէրդ աւելի հնգիւ է, քան զերկպատիկն զինք իգին՝ յաղագս կատարելութեան հասակին եւ կամ յաղագս կատարելութեան պիտոյից կարգաց, սակայն ըստ կազմածին եւ ի միւսն ցուցաւ արուին կրկին լինել: Յայդցանէ հաստատին երկու դուստր մին լինել որդի ի ժառանգութիւնս: Բայց գիտելի է եւ զայն եւս, զի կարգեալ դստերքն երկուսն է մին որդի, այլ ոչ որ ի տանն է, զի ժառանգ հրամայեցաւ, յորմէ յայտ է, զի զորդոյ առնու զբաժին, եւ այլքն զկէս եղբօր առնելով ելեալքն, նմանապէս զոյգ գտանին եղբարցն, ըստ հրամանի Տեառն՝ եթէ չիցէ որդի, դուստրն ժառանգիցէ: Այլ այդ դատեալ եղեւ ըստ կազմածին, եթէ զերկուս դստերս մին առնելի է եղբայր, եւ ցուցաւ ըստ Տեառն



հրամանի, եթե ժառանգ է նման որդոյ, որ ի տանն է: Այլ կամ լիցի եւ գայս ըստ հաճոյից եւս ընտրել, եթե գամենա՞յն դստերս գերկուսն մի առնելի է եւ եթե գելե՞ալսն: Այլ ինձ այսպէս թուի, եթե ելեալն ի տանէն բաժնիւ եւ առն եղեալն՝ երկուքն մին լեալ, գոյգ ընդ եղբօրն առնու բաժին իւրով կրկին բաժնաւն, ապա որ ի տանն՝ հաւասար եղբարցն ժառանգէ զհօրն: Հաստատի ըստ այսմ ուստերաց եւ դստերաց հաւասար լինել ժառանգութիւն հօր, ըստ որում եւ աստուած գոյգ եւս զժառանգութիւն արքայութեան արանց եւ կանանց: Սակայն աւանդապահք կարգաց եկեղեցոյ արք եւ ոչ կանայք են. նմանապէս թէպէտ բաժանորդք ընդ եղբարս ժառանգութեանն քոյրք են, այլ ոչ ժառանգապահք, յորժամ եղբարք իցեն: Եւ եթե հայր իցէ, կինն միայն առցէ մասն, եւ ոչ մայր եւ ոչ քոյր մասնաւորին, որ եւ այս իսկ է: Զի եւ որդի դստեր ոչ ժառանգէ եւ ոչ առցէ մասն, բայց թէ մինչ կենդանի իցէ գրով ժառանգ առնիցէ. նոյնդ լիցի եւ խորթն: Սակայն իշխան է կենօքն ժառանգեցուցանել զնոսա, թէ կամեսցի, իբրեւ գօտարս: Եւ թէ խորթն եւ կամ որդի դստերն ի տանն իւրում աշխատեալ իցեն, իբր վարձկանի առցեն վարձ եւ ոչ մասն, զի եւ առաքեալն ոչ ընդ որդիս համարի զնոսա, ասելով՝ խորթ էիք եւ ոչ որդիք: Ապա թէ որ զկանոնացն ընդդէմ այսմ դիցէ, զի իբր գորդոց՝ զծնունդս նոցա հրաժարեցուցէ ի խնամութիւնս, զհտասցէ, զի պսակաւն ընդ մօրն ընտանութիւն եղեւ, եւ խափանի ամուսնութիւնն. այլ զի սերմ ոչ է հօրն, ոչ ժառանգէ, զի թէ Աբրահամ եւ ոչ զհօր ծնունդսն արար արժանի ժառանգ լինել, ո՞րչափ օտար ծնունդն: Նաեւ ոչ եղբայր մօրն, եւ ոչ որդի նորա, եւ ոչ որդի քուերն, եւ ոչ մօրքոյրն, եւ ոչ նորին որդին եւ կամ հորքոյր ոչ ժառանգեն եւ ոչ մասնաւորին, բայց եթէ կանխաւ ժառանգեցուցանէ: Իշխան է եւ զծառայս ստանալ ժառանգս, թէ կամեսցի, որպէս ի կանոնսն եցոյց. թերեւս ծառայս ստացեալ իցէ, յայտ է, թէ ժառանգս, որ ինչսն ասաց թողուլ: Իսկ յորժամ դուստրն ժառանգէ՝ որ ի տանն իցէ, հօրեղբայր եւ նորին որդի ժառանգել ոչ կարեն եւ ոչ մասնաւորիլ. ապա թէ առն լեալ իցէ եւ ի ժառանգ գայցէ, հօրեղբայրն մասն առցէ դանգ, այլ ոչ որդի նորա, բայց թէ պատահի ի հարցն ժառանգութիւնսն դատաստան լինել: Իսկ թէ չիցեն ուստերք եւ դստերք մինչ ի չորրորդ զարմն, որ ի հօրէն ժառանգեացեն, եւ այլք՝ ոչ եւս, եւ ոչ՝ ի մարցն տոհմէ:

**ԳԼՈՒԽ ԶԳ ՎԱՍՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԿԱՆԱՆՑ ԶԻՐՍ ՈՐԴՈՅ
ԻԻՐԵԱՆՑ**

Եւ կանանց մեռելոց նոյն լիցի դատաստան, որպէս եւ արանցն զկնի մահուան. եթէ չիցեն ուստերք եւ դստերք, իբրոյ թէ ծնեալ իցէ ուստերս եւ դստերս, եւ մեռեալ իցեն, եւ թէ ի բնէ անժառանգ իցէ, եւ թէ ընդ պսակին փութով վախճանեալ կուսութեամբ, սակայն յայդոսիկ զանազանի դատաստանն: Արդ, ըստ նմանութեան արանց, թէ ուստր իցէ, նա է ժառանգ մօրն, ապա թէ չիցէ ուստր կամ դուստր՝ եղբայրն, եւ թէ չիցէ եղբայր՝ հօրեղբայրն, եւ թէ չիցէ հօրեղբայր, ի ցեղէ հօրն ժառանգէ մինչեւ ի չորրորդ գարմն: Ապա թէ հայր իցէ, հայրն ժառանգէ, եւ այլն՝ զոյգ է միմեանց: Իսկ թէ ծնեալք իցեն մօրն, ամենայն ինչ նոցա է, որպէս եւ հօրն ժառանգութիւնն: Ապա թէ մեռանիցի մանուկն, ժառանգութիւնն հօրն եղեւ եւ ոչ անդրադարձի առ մայրն իբր ժառանգութիւն: Ապա թէ մայր եւս մեռանիցի, եւ հայր իցէ մօրն, երկուցն լիցի ժառանգութիւնն՝ հօր մանկանն եւ հօր մօր մանկանն. նախ զպատշաճ ոգոյ նորա տալով՝ յերկուս բաժանեցի: Իսկ եթէ ի բնէ անժառանգ իցէ, ժառանգութիւնն հօրն լիցի, եւ թէ ոչ է հայր, այլոց ժառանգաւորացն լիցի, որպէս ցուցեալ է: Իսկ առն մի դանգ լիցի վասն ի միասին կենակցութեան: Ապա թէ ոչ իցեն միաւորեալք, եւ մեռանի կինն, մի՛ լիցի առն եւ ոչինչ ի կնոջէն, զի որպէս ոչ է տիրեալ մարմնոյ նորա, նոյնպէս եւ ոչ տիրէ ընչից նորա: Նոյն լիցի եւ կնոջն: Ապա թէ ամուսնացեալ իցէ, թէ եւ սակաւ ժամանակ, նմանապէս դանգ մի լիցի առնն: Եւ զի որպէս զհօրն ժառանգելով որդին՝ մայրն մին դանգ առցէ, նոյնպէս եւ զմօրն ժառանգելով որդին՝ հայրն մին դանգ առցէ:

ԳԼՈՒԽ ԶԴ ՎԱՍՆ ԹԷ ՈՐՐՊԷՍ ԲԱԺԱՆԵՆ ԶԿՈՒՄԱՇՆ ՌԻՍՏԵՐՔ ԵՒ ԴՍՏԵՐՔ

Ըստ բաժանողական արուեստի զժառանգութիւնս զայս այսպէս ուղիղս բաժանեցես: Զինչսն զամենայն մի համարեցիս դահեկան եւ զդահեկանն՝ վեց դանգ: Եւ թէ մին որդի իցէ եւ մին դուստր, որ ի տանն, յերկուս բաժանեցես զերկու դանգ ու կէսն՝ եղբօրն, եւ զնոյնս՝ քուերն, եւ մին դանգ՝ մօրն: Ապա թէ կարգեալ քոյրք իցեն, զերկուսն մին եղբայր համարեա եւ զերկու դանգ ու կէսն եղբօրն տացես, եւ զերկու դանգ եւ կէսն՝ երկու քուերն, եւ զմին դանգն՝ մօրն: Իսկ եթէ մին եղբայր իցէ եւ մին քոյր առնակին, կէս դահեկան եւ չորս գարի եղբօրն լիցի, եւ դանգ եւ կէս եւ երկու գարի՝ քուերն, եւ մին դանգ՝ մօրն: Ապա թէ երկու եղբայր եւ մին քոյր իցէ, որ ի տանն, դանգ եւ կէս եւ երկու գարի մին եղբօրն լիցի,

եւ նոյնչափ՝ միստյն, եւ նոյնքան՝ քուերն, լիցի, եւ երկու դանգ՝ միւս եղբօրն, եւ մին դանգ՝ քուերն, եւ մին դանգ՝ մօրն: Ապա թէ երկու եղբայր եւ մին քոյր իցէ, որ ի տանն, դանգ եւ կէս եւ երկու գարի մին եղբօրն լիցի, եւ նոյնչափ՝ միստյն, եւ նոյնքան՝ քուերն, եւ մին դանգ՝ մօրն: Իսկ թէ կարգեալ քոյրն իցէ, երկու դանգ մին եղբօրն լիցի, եւ երկու դանգ՝ միւս եղբօրն, եւ մին դանգ՝ քուերն, եւ մին դանգ՝ մօրն: Ապա թէ մայրն ոչ իցէ, ինքեանց միայն բաշխեսցեն. երկու դանգ եւ թասու եւ մին գարի եւ չորս դանգ գարոյ եւ երեք թասու գարոյ՝ մին եղբօրն, նոյնպէս՝ եւ միստյն, եւ մին դանգ եւ երկու գարի եւ երկու դանգ գարոյ եւ կէս դանգ գարոյ՝ քուերն: Կէս թասու գարոյ աւելի է քուերն: Եւ զի զայս ցուցաք յայտ առնելոյ աղագաւ, եթէ զիրաւն եւ զարդարն խնդրէ դատաստան: Իսկ եթէ երեք եղբայր եւ մին քոյր իցէ, դանգ եւ կէս եւ երկու գարի եւ կէս՝ իւրաքանչիւր եղբօր, եւ երեք թասու եւ գարի եւ կէս՝ քուերն: Եւ է քուերն դանգ եւ կէս աւելի գարոյ: Զի թէ կամ լիցի, այդպէս տկար մասինն զսակաւն թողցես աւելի, ապա թէ ոչ՝ զայն եւս հաւասարեսցես: Ապա թէ չորս եղբայր եւ մին քոյր իցէ՝ դանգ եւ թասու եւ մին գարի՝ իւրաքանչիւր եղբօր, եւ կէս դանգ եւ կէս թասու եւ կէս գարի՝ քուերն: Իսկ եթէ հինգ եղբայր եւ մին քոյր իցէ, իւրաքանչիւր եղբօր մին դանգ լիցի եւ մին գարի, եւ քուերն՝ կէս դանգ եւ մին գարի: Կէս գարի եւ աստ աւելի լինի քուերն: Ապա թէ վեց եղբայր եւ մին քոյր իցէ, երեք թասու եւ երկու գարի իւրաքանչիւր եղբօր լիցի, եւ կէս դանգ՝ քուերն: Ըստ այսմ օրինակի եւ զայլսն որքան իցէ բաժանեսցես: Նմանապէս եւ զմօրն բաժանեսցես զժառանգութիւն: Իսկ եթէ վեց քոյր իցեն եւ մին եղբայր, ի չորս բաժին զժառանգութիւնն բաժանեսցես՝ երեք եղբայր ի վեց քոյրն լիցի: Ըստ այսմ օրինակի եւ այլքն լիցին: Եւ եթէ մայր իցէ՝ եւ այն ցուցաւ, եւ եթէ ոչ՝ եւ այն: Եթէ ի տան քոյրն իցէ եւ եթէ առն լեալ իցէ, ըստ զանազանութեան նոցա եւ դատաստանն հաստատեսցի, զի սակաւ եւ այդ նշանակ տուաւ: Յորմէ զարժանն նոքա գտցեն եւ զթերին լցցեն, եւ մի՛ ինչ պարսաւանս դիցեն, զի ըստ կարի մեր այդքան ծանուցաւ:

ԳԼՈՒԽ ՃԵ ՎԱՍՆ ՈՐ ԶՔԱՀԱՆԱՅ ԵՒ ԶԴԱՏԱԻՈՐ ԱՆԱՐԳԷ

Եթէ վրիպեսցի ի քէն բան ի դատաստանի ի մէջ արեան եւ արեան, ի մէջ դատաստանի եւ դատաստանի, ի մէջ գրգռութեան եւ գրգռութեան, ի մէջ հակառակութեան եւ հակառակութեան, բան դատաստանի ի քաղաքս քո, յարուցեալ երթիցես ի տեղին, զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո անուանել զանուն

իւր անդ: Եւ երթիցես առ քահանայս Ղեւտացիս եւ առ դատաւորսն, որ լինիցին յաւորսն յայնոսիկ, եւ քննեալ պատմեսցեն քեզ զդատաստանն: Եւ արասցես ըստ հրամանին, զոր պատմեսցեն քեզ, որք ի տեղոյն իցեն, զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո, եւ զգուշասջիր առնել ըստ ամենայնի, որպէս օրինադրեսցի քեզ: Ըստ օրինացն եւ ըստ դատաստանին, զոր ասասցեն քեզ, արասցես եւ մի՛ խտտորեսցիս ի բանէն, զոր պատմեսցեն քեզ, մի՛ յաջ եւ մի՛ յահեակ: Եւ մարդ որ որ առնիցէ հպարտութեամբ առ ի չլսելոյ քահանային, որ կայցէ պաշտել յանուն Տեառն Աստուծոյ քոյ, կամ դատաւորին, որ իցէ յաւորսն յայնոսիկ, մեռցի մարդն այն: Տես զի զարհամարհողս քահանայից եւ դատաւորաց զոյգ եցոյց, զի մի է զօրութիւն Օրինաց եւ դատաստանի, եւ պարտաւորութիւն նոցա մահ է, զի եւ չանսալ նոցա մահ է, այսինքն՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ անհնազանդութիւն Աստուծոյ. եւ արեանն յայտ է դատաստանն:

ԳԼՈՒԽ ԾԶ ՎԱՍՆ ՊՏՂՈՅ ՔԱՀԱՆԱՅԻՑ Ի ԺՈՂՈՎՐԴՈՅ

Եւ այս են իրաւունք քահանայիցն ի ժողովրդենէն, որք զենուցուն զենլիս. եթէ արջառ իցէ եւ եթէ ոչխար՝ տացէ քահանային զաջոյ երին, եւ զծնօտն, եւ զխախցոցն: Չպտուղս ցորենոյ, եւ զգինոյ, եւ զհիւոյ քոյ եւ զպտուղս կտրոցաց խաշանց քոց տացես նմա: Չի գնոսա Տէր Աստուած ընտրեաց յամենայն ցեղիցն քոց կալ առաջի Աստուծոյ քոյ, եւ պաշտել եւ օրինել զանուն նորա, նաեւ որդիք իւր զամենայն աւուրս: Չայս իրաւունս եւ այժմ ոչ պահեն հաւատացեալք, զոր հարկաւոր է առաւելուլ քան զՕրինացն, զի հասարակաց զենմանն օրինադրէ իբր զայլ պտուղսն, զի ոչ զընծայից զենմանն է բանդ: Եւ զայդ եղաք, եթէ ըստ դատաստանի իրաւանց է եւ քրիստոնէից այդոքիւք զքահանայս պատուել:

ԳԼՈՒԽ ԾԷ ՎԱՍՆ ՍԱՀՄԱՆԱՅ, ԹԷ ՈՐՊԷՍ ՍԻՆՕՌ ԵՆ

Մի՛ փոխեսցես զսահմանս ընկերի քոյ, զոր հաստատեցին հարքն քո ի ժառանգութեան քում, զոր ժառանգեսցես յերկրին զինչ եւ իցէ, զոր Տէր Աստուած տացէ քեզ ի ժառանգութիւն: Չանդաստանաց եւ զայլոց ասէ ճառդ. առ եղբարս, եւ առ ազգականս, եւ առ օտարս հրամայէ իրաւամբք վարիլ: Չոր ի հօրէ ունի զսահման ժառանգութեան իւրոյ, ոչ պարտի զնկերին յափշտակել, բայց եթէ կանխաւ յափշտակեալ եւ զրկեալ իցէ, դատ վարել: Այլ ճշմարտութեամբ ի հօրէ

առեալ ժառանգութիւն ոչ է իրաւացի զկնի մահուան հօրն զղջմամբ փոխել ընդ այլ ժառանգակցացն:

ԳԼՈՒԽ ԶԸ ՎԱՍՆ ՈՐ ՍՈՒՏ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՏԱՆ Ի ԴԱՏԱՍՏԱՆԻ

Ոչ հաստատեսցի մին վկայել զմարդոյ ըստ ամենայն ապիրատութեան, եւ ըստ ամենայն յանցանաց, եւ ըստ ամենայն մեղաց, զոր մեղանշէ: Ի բերանոյ երկուց եւ երից վկայից հաստատեսցի ամենայն բան: Եւ եթէ կացցէ յառաջ սուտ վկայ զմարդոյ եւ չարախօսեսցէ զնմանէ ամբարշտութիւն ինչ, կացցեն երկոքին արքն, որոց իցէ հակառակութիւն, առաջի Տեառն, եւ առաջի քահանայիցն եւ դատաւորացն, որ իցեն յաւուրսն յայնոսիկ, եւ քննեսցեն դատաւորքն ճշմարտութեամբ. եւ ահա վկայ անիրաւ վկայեաց զանիրաւութիւն, եկաց հակառակ եղբօր իւրում: Արասջիք նմա՝ որպէս խորհեցաւ չար առնել եղբօրն իւրում, եւ բարձջիք զչարն ի միջոյ ձերմէ: Օրինացս դատաստան գեկուցանէ գերկուց եւ գերից վկայից հաստատէ զբան, եւ զսուտ վկայս ըստ չար կամացն հրամայէ տանջել: Եթէ արեան կամեսցի վկայել եւ թէ այլոցն՝ նովին դատել:

ԳԼՈՒԽ ԶԹ ՎԱՍՆ ԹԷ ԳՏՅԻ ՍՊԱՆԱԾ Ի ԴԱՇՏԻ

Եւ եթէ գտանիցի վիրաւոր ի դաշտի յերկրին քում, զոր Տէր Աստուած տացէ քեզ ժառանգել, անկեալ ի դաշտի, եւ ոչ զհտիցեն զայրն, որ խոցեացն զնա, ելցէ ծերակոյտն քո եւ դատաւորքն քո եւ չափեսցեն շուրջ զվիրաւորաւն զվայրս քաղաքացն: Եւ եղիցի քաղաք, որ հուպ իցէ առ վիրաւորն, աոցէ ծերակոյտ քաղաքին այնորիկ երինջ մի յարջառոց, այլօքն: Յայսմանէ յայտ է ո՛չ տուգանս լինել այսպիսի սպանման եւ ո՛չ դատաստան արեան, այլ քաւութիւն պատարագօք՝ անդ եւ աստ՝ ապաշխարութիւն: Այդոցիկ հետեւելի է դատաւորաց, որքան անյայտ է, իսկ յայտ եկեալն՝ տուգանք՝ հաղորդիցն, եւ արեան դատաստան՝ սպանողին:

ԳԼՈՒԽ ԶԺ ՎԱՍՆ ԳԵՐԵԼՈՅ ԿԱՆԱՆՅ ԱՅԼԱԶԳԵԱ

Եթէ ելանիցես ի պատերազմ ի վերայ թշնամեաց քոց, եւ մատնեսցէ զնոսա Տէր Աստուած քո ի ձեռս քո, եւ աւարեսցես զաւար նոցա: Եւ տեսանիցես յաւարին կին գեղեցիկ տեսլեամբ, եւ ցանկանայցես նմա, աոցես զնա քեզ կին, եւ տարցես

զնա ի տուն քո, եւ գերծցես զգլուխ նորա, եւ սրբեսցես զըղնգունս նորա, եւ հանցես զհանդերձ գերութեան նորա, եւ նստցի ի տան քում եւ լացցէ զհայր եւ զմայր իւր զաւուրս ամսոյ միոյ, եւ ապա մտցես առ նա եւ բնակեսցես ընդ նմա, եւ եղիցի քեզ կին: Եւ եղիցի եթէ ոչ հաճեսցիս ընդ նմա՝ արձակեսցես զնա ազատ, եւ վաճառելով մի՛ վաճառեսցի ընդ արծաթոյ, եւ մի անարգեսցես զնա, քանզի լլկեցեր զնա: Եւ զայս ըստ Օրինացն լրմամբ ընկալցին. թէ պատահի քրիստոնէի՝ նախ մկրտել եւ զօրինակ հնութեանն բառնալ եւ ապա առնուլ կին ըստ կարգի ամուսնութեան: Եւ ոչ եթէ յորժամ ոչ հաճեսցի, արձակէ ազատ, այլ եւ ոչ բնաւ արձակել, առանց բանի պոռնկութեան, իշխան է: